

Ինչու են Կարևոր Սահմանված Պատվաստումները

1. Արդյո՞ք իմ երեխան պետք է ստանա իր անհրաժեշտ մյուս պատվաստումները, քանի դեռ Լոս Անջելեսում կան COVID-19-ով վարակման դեպքեր




- Այո, պատվաստումները և երեխաների առողջական վիճակին հետևելու այցելությունները (well-child visits) կարևոր են բոլոր երեխաների համար և Էական նշանակություն ունեն երկու տարեկանից փոքր երեխաների համար: Պատվաստումներն օգնում են ձեր երեխային լինել ապահով և առողջ: Նրանք պաշտպանում են երեխաներին լուրջ և վտանգավոր հիվանդություններից, ինչպիսիք են՝ կարմրուկը, խոզուկը և կապույտ հազը:
- Եթե ձեր երեխան բաց է թողել որոշ պատվաստումներ, այժմ պատվաստվելու ճիշտ ժամանակն է:
- Տարիքին համապատասխան պատվաստումների ցանկի համար այցելեք՝ www.cdc.gov/vaccines/schedules/parents-adults/resources-parents.html.

2. Որտե՞ղ կարող եմ տանել իմ երեխային՝ ստանալու իր անհրաժեշտ պատվաստումները



- Ձեր երեխան կարող է պատվաստվել իր բժշկի մոտ կամ տեղամասային դեղատանը: Եթե չունեք բժշկական ապահովագրություն կամ հիմնական բժիշկ ձեր երեխայի համար, կարող եք այցելել անվճար կամ ցածր արժեքով պատվաստման կլինիկա: Այցելեք publichealth.lacounty.gov/ip/clinics.htm կամ զանգահարեք Լոս Անջելեսի Շրջանի Տեղեկատվական Գիծ 2-1-1 հեռախոսահամարով՝ ձեզ մոտիկ կլինիկա գտնելու համար: Տեղեկատվական Գիծը հասանելի է օրական 24 ժամ և տրամադրում է տեղեկություններ մի քանի լեզուներով:

3. Արդյո՞ք իմ երեխան պետք է պատվաստվի COVID-19-ի դեմ



- Այո: Երեխաների պատվաստումը պաշտպանում է նրանց COVID-19-ով վարակվելուց, հիվանդանալուց, կամ վիրուսը ուրիշներին փոխանցելուց: Այս պահի դրությամբ, 5 տարեկան և բարձր տարիքի երեխաները կարող են պատվաստվել COVID-19-ի դեմ Pfizer պատվաստանյութով:
- Ծնողների համար տեղեկությունների և երեխաների պատվաստման մանրամասների համար այցելեք՝ VaccinateLACounty.com:

4. Կարո՞ղ է իմ երեխան միաժամանակ պատվաստվել COVID-19-ի և մյուս հիվանդությունների դեմ



- Այո: COVID-19-ի դեմ պատվաստումը կարելի է կատարել մյուս պատվաստումներին զուգահեռ կամ տարբեր ժամանակահատվածներում: Ձեր երեխան չպետք է սպասի COVID-19-ի դեմ պատվաստման և մյուս պատվաստումների, ներառյալ գրիպի դեմ պատվաստման միջակայքում:

5. Արդյո՞ք ինձ անհրաժեշտ են լինելու իմ երեխայի պատվաստման փաստաթղթերը՝ նրան դպրոցում գրանցելու համար



- Այո: Այս տարի 1-ին և 8-րդ դասարաններ ընդունվող բոլոր աշակերտները, ինչպես նաև մանկապարտեզ և 7-րդ դասարան ընդունվող աշակերտները, պետք է ցույց տան, որ ստացել են բոլոր անհրաժեշտ սահմանված պատվաստումները: Մանրամասների համար այցելեք՝ www.shotsforschool.org: